ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սաուդյան Արաբիայի Թագավորությունն (ՍԱԹ) այն բացառիկ իսլամական պետություններից է, որտեղ կրոնական եւ քաղաքական կառույցներն ու ինստիտուտները սերտաճած են, իսկ հասարակական գիտակցության հիմքում ընկած է իսլամը: Սաուդյան Արաբիայում, որը թե՛ արաբական եւ թե՛ իսլամական ինքնության կրող է, իսլամը թերևս ավելի մեծ դերակատարություն ունի քաղաքական եւ սոցիալական կյանքում, քան որևէ այլ արաբական երկրում: Պետական համակարգի հիմքում ընկած է թեոկրատ պետության (աստվածապետության) մոդելը: Սաուդյան Արաբիան այն միակ երկիրն է ողջ մահմեդական աշխարհում, որտեղ Ղուրանը և մարգարեի սուննան ծառայում են որպես սահմանադրություն, իսկ հասարակության բարոյական, սոցիալական եւ իրավական կողմերը կարգավորում է շարիաթը: Պետական գաղափարախոսության հիմքում ընկած է վահաբականությունը, որի մասին խոսվում է միայն պատմական եւ դավանաբանական համատեքստում:

Իշխանական համակարգի կենտրոնական դեմքը թագավորն է՝ Ալ Սաուդ ընտանիքից: Նա մարմնավորում է թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ իշխանությունը, որ ներառում է դատական, գործադիր և օրենսդիր ոլորտները: Թագավորական ընտանիքը երկիրը կառավարում է վահաբական ուլամայի իշխող թևի՝ Ալ աշ-Շեյխի հետ դաշն կնքած:

ՍԱԹ-ն այն եզակի պետություններից է, որտեղ իսլամական իրավունքը ծառայում է որպես գլխավոր օրենսդրական աղբյուր: Իսլամական իրավական ուղղություններից ՍԱԹ-ում հիմնականում տարածված է հանբալիականությունը, որն իսլամի ամենաարմատական կրոնական-իրավական դպրոցն է, քանի որ մերժում է *իջթիհադը*[1] և ծայրահեղ անհանդուրժող է ամեն տեսակ նորարարության հարցում: Այս հանգամանքը շատ դեպքերում խթանել է հասարակության կրոնական գիտակցության մեջ ծայրահեղականության դրսևորմանը: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններին մասնակից 19 անձնասպաններից 15-ը սաուդցիներ էին:

2003 և 2004 թվականները Սաուդյան Արաբիայում նշանավորվեցին բարեռորոգչական շարժումներով, որոնք ուղեկցվեցին սոցիալ-քաղաքական բարեփոխումների մի շարք պահանջներով, հասարակական ելույթներով, ինչն անվտանգության մարմինների կողմից շատ դեպքերում ուղեկցվեց բռնություններով: Նշենք, որ բարեփոխումների ծրագրեր թագավորական ընտանիքին ներկայացվել էին դեռևս 1990-1991թթ. Ծոցի պատերազմի շրջանում կրոնական արմատական ընդդիմադիրների կողմից, որոնք Ֆահդ թագավորից պահանջում էին երկու սրբավայրերի երկրից՝ իսլամի հայրենիքից, դուրս բերել ամերիկյան և դաշնակից՝ ոչ իսլամական զորքերը, վերանայել երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը[2]: Արդյունքում, 1992թ. Ֆահդ թագավորը ներկայացրեց սահմանափակ բարեփոխումների մի ծրագիր: Երկրի պատմության մեջ առաջին անգամ հրապարակվեց հիմնական օրենքի նշանակություն ունեցող մի փաստաթուղթ՝ «Երկրի կառավարման համակարգը» («Ան-նիզամ աս-սիյասի լիլ-հուքմ»)[3] և ստեղծվեց խորհրդակցական մարմնի նշանակություն ունեցող և թագավորի կողմից նշանակվի Մաջլիս աշ-շուրան (Շուրայի Խորհուրդը)[4]:

2003-2004թթ. ՍԱԹ-ում իսլամական բարեռորոգչական շարժման առաջատարները, ինչպես անվանում է նրանց սաուդցի այլախոհ գործիչ, նախկին քաղբանտարկյալ Աբդ ալ-Ազիզ ալ-Կասիմը, իսլամական ազատականները կամ ազատական իսլամականներն են: Վերջիններս բնորոշվում են նաև որպես՝ *վասատիյուններ* (չափավորներ), *բանվիրիյուններ* (լուսավորչականներ), *ակլանիյուններ* (ռացիոնալիստներ) կամ *իսլահիյուններ* (բարեռորոգիչներ)[5]: Իսլամական բարեռորոգիչները, որոնց ելակետը սալաֆիական կամ վաղ իսլամն է, չեն խուսափում քննադատել ավանդական իսլամական գաղափարախոսություններն ու դրանց տեսաբաններին: Նրանց կարծիքով՝ *իջթիհադի* գործադրումն անհրաժեշտ է, որ ցույց է տալիս, թե իսլամն անհամատեղելի չէ արդիականության, առավել ևս՝ ժողովրդավարական արժեքների հետ: Նրանց կարծիքով՝ քաղաքական և կրոնական բարեփոխումները համատեղելի են: Ազատականների մոտ Արևմուտքի նկատմամբ առկա մոտեցումները, ի տարբերություն իսլամական ծայրահեղականների, պայմանավորված են ոչ թե գաղափարախոսական, այլ քաղաքական հիմքերով: Իրենց հարցադրումները տեղադրելով կրոնական-քաղաքական նոր ռակուրսի մեջ՝ նրանք բազմաթիվ շիա բարեռորոգիչների հետ կարողացան ստեղծել իսլամական սկզբունքների վրա խարսխված և հակավահաբական քաղաքական պլատֆորմ[6]:

Բարեռորոգիչների մեջ առանձին խումբ են կազմում աշխարհիկ ազատականները, որոնք չունեն ազդեցիկ դիրքեր և սահմանափակվում են համախոհների նեղ շրջանակով: Նրանք առաջ են քաշում կրոնի և պետության տարանջատման, խոսքի ազատության, կրոնական հան-

դուրժողականության, ընտրական իրավունքի ներդրմանն առնչվող հարցեր[7]:

Բարենորոգումների հարցը հասարակական մեծ հնչեղություն ստացավ այն բանից հետո, երբ 2003թ. հունվարին բարեփոխումներ անցկացնելու խնդրագրով թագաժառանգ Աբդալլահին[8] դիմեցին 104 սաուդցի բարենորոգիչներ, որոնք կոչ էին անում երկրում մտցնել ընտրական իրավունք, ստեղծել սահմանադրություն, ընտրովի խորհրդարան, անկախ դատական համակարգ, պայքարել կոռուպցիայի դեմ, վերանայել կանանց իրավունքների, խոսքի ազատության, ինչպես նաև՝ կրոնական, տեղային և սոցիալական խտրականությունների և դրանց առնչվող այլ հարցեր[9]: Նրանց կարծիքով՝ շուտափույթ բարենորոգումների ճանապարհով միայն կարելի էր երկրում խուսափել բռնության, անկայունության և ազգային տարանջատվածության սպառնալիքից: Բացի այդ, նրանք առաջարկում էին քաղաքական որոշումների ընդունմանը մասնակից դարձնել հասարակության բոլոր շերտերին: Հունվարի 23-ին բարենորոգիչների մի խմբի հետ հանդիպեց թագաժառանգ Աբդալլահը, որը հավաստիացրեց, թե բարենորոգումների իրականացումը երկրում անխուսափելի է:

2003թ. մայիսի 12-ին Ռիադում ալ-Կաիդայի կազմակերպած ահաբեկչությունից հետո, որին զոհ գնացին բազմաթիվ սաուդցիներ, ամերիկացիներ և օտար քաղաքացիներ, ծավալվեցին հրապարակային քննարկումներ մարտնչող իսլամի և վահաբականության առնչության հարցի շուրջ, ինչը նոր մարտահրավեր էր թագավորական ընտանիքին, որը կանգնած էր բարեփոխումների անհրաժեշտության փաստի առաջ: Ահաբեկչության դատապարտմամբ հանդես եկավ Ներքին գործերի նախարար էմիր Նայիֆը, որի կարծիքով՝ ահաբեկչությունը իսլամի անունով արդարացնողը իր կրոնի և հայրենիքի դավաճանն է: Նայիֆի տեսակետը պաշտպանեցին բարձրաստիճան կրոնավորներ, այդ թվում՝ Գլխավոր ուլամայի խորհրդի նախագահ աշ-Շեյխը և ուրիշներ, որոնց գնահատմամբ՝ ահաբեկչությանը դիմող մահմեդականները հավատուրացներ են[10]:

2003թ. մայիսի 17-ին, ելույթ ունենալով Շուրայի Խորհրդում, Ֆահդ թագավորը հայտարարեց, որ Սաուդյան Արաբիան ընթանում է բարենորոգումների ճանապարհով: Նա նշեց, որ իրենք պատրաստվում են մեծացնել ժողովրդի մասնակցությունը կառավարման գործերում՝ ավելի մեծ հեռանկարներ բացելով կանանց համար, որոնք պետք է մասնակից դառնան ապագայի կերտմանը[11]:

2003թ. օգոստոսի սկզբին թագավորական հրամանով ստեղծվեց Աբդ ալ-Ազիզ թագավորի Ազգային երկխոսության կենտրոնը, որի նպատակն էր սաուդական հասարակությանն առնչվող խնդիրների շուրջ բանավեճեր կազմակերպել: Թագաժառանգ Աբդալլահի կարծիքով՝ կենտ-

ռոնի բացումը պատմական ձեռքբերում էր, որն աջակցելու էր երկրում ծայրահեղականության և մոլեռանդության դեմ պայքարին[12]:

Հոկտեմբերի 14-ին մարդու իրավունքներին նվիրված համաժողովի օրը սաուդցիները ձեռնարկեցին նախադեպը չունեցող բողոքի մի ցույց, որը ճնշվեց անվտանգության ուժերի կողմից: Հայտնի ցուցարարներ ձերբակալվեցին[13]:

Երկրում ստեղծված ճնշող տպավորությունը թուլացնելու նպատակով 2003թ. հոկտեմբերի 13-ին Շուրայի Խորհուրդը հայտարարեց առաջիկա 12 ամիսների ընթացքում 178 տեղական ինքնակառավարման խորհուրդներում ընտրություններ անցկացնելու մասին[14]: 2004թ. նոյեմբերին հրապարակվեց ընտրական օրենքը, հստակ կերպով սահմանվեցին ընտրակարգի պայմանները[15]:

Իսլամական բարեռորոգչական շարժման կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ հասարակությունը ինչ-որ չավտով հնարավորություն ստացավ խոսել նախկինում արգելված և սաուդական հասարակության տեսանկյունից հրատապ թվացող հիմնահարցերի մասին: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ 2003թ. դեկտեմբերին Մեքքայում անցկացված Ազգային երկխոսության կենտրոնի առաջին հանդիպման ընթացքում փորձ արվեց քննարկել սաուդական հասարակության մեջ ստեղծ արմատականության և ծայրահեղականության տարբեր կողմերը, պատճառներն ու հետևանքները, դրանց հետագա կանխմանն ուղղված քայլերը: Անհրաժեշտ համարվեց սաուդական կրթական, սոցիալական և կրոնական համակարգերի արդիականացումը[16]:

Հարկ է նշել, որ լիբերալ գաղափարների տարածմանն հարցում ոչ պակաս կարևոր և դրական նշանակություն ունեցավ սաուդական մամուլը, որ հնարավորինս արձագանքեց ժամանակի հրամայականով թելադրված խնդիրներին: Մինչդեռ նախկինում մամուլը զգայուն թեմաների անդրադառնում էր միայն Սաուդյան Արաբիայի լրատվական պետական գործակալությունից կամ էլ կառավարական պաշտոնատարների համապատասխան անդրադարձներից հետո: Բազմաթիվ օտար լրագրողներ թույլտվություն ստացան ազատ կերպով տեղաշարժվել երկրի ներսում: Կառավարությունը սկսեց ավելի բաց աշխատել մամուլի առաջ[17]: Ճիշտ է, մամուլը որոշ չափով ազատականացավ, սակայն այսօր էլ շարունակվում է մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի աշխատանքների գրաքննությունը, արգելվում է թագավորական ընտանիքին ուղղված քննադատությունը[18]:

2003-2004 թվականների բարեռորոգչական գործընթացներին զուգահեռ Սաուդյան Արաբիայում մեծ թափ ստացան ֆեմինիստական շարժումները: Մարդու իրավունքների պաշտպան արևմտյան կազմակերպությունների տեսանկյունից՝ Սաուդյան Արաբիայում օրակարգային է կանանց իրավունքների հարցը[19]: Կանայք կազմում են ՍԱԹ-ի

բնակչության 50 տոկոսից ավելին, ինչն ավելի հրատապ է դարձնում նրանց մասնակցությունը սոցիալական կյանքում: Մինչդեռ ՍԱԹ-ում աշխատում է կանանց 4.8 տոկոսը[20]: 2004թ. սեպտեմբերին կառավարությունը հայտարարեց 11 մլրդ դոլլար արժույթամբ նոր ծրագրի մասին, որ հնարավորություն կտա նոր աշխատատեղեր բացել նաև կանանց համար[21]: Թագավորությունում պարբերաբար տեղի են ունենում կանանց թեմաներին նվիրված բանավեճեր:

2004թ. գարնանից բարեփոխողական շարժումը, ընդհանուր առմամբ, կորցրեց իր նախկին թափը, քանի որ շարժման բազմաթիվ ակտիվիստներ սկսեցին հետապնդվել: Բարեփոխումների ընդդիմախոս էմիր Նայիֆի[22] կարգադրությամբ 2004թ. մարտին ձերբակալվեց այլախոհների 12-13 հոգանոց մի խումբ, որ կոչ էր անում բացարձակ միապետությունից անցնել սահմանադրական միապետության, անցկացնել Շուրայի խորհրդի ընտրություններ, ստեղծել անկախ գործող մարդու իրավունքի մոնիտորինգի խումբ և այլն[23]: Այլախոհների ձերբակալությունը բողոքի նոր ալիք և բարեփոխումներ անցկացնելու հարցում անվստահություն առաջացրեց վարչակարգի նկատմամբ: Ձերբակալվածների մեծ մասն ազատ արձակվեցին՝ հրապարակային կերպով բարեփոխումներին չանդրադառնալու պայմանով: Սակայն շարժման երեք առաջնորդներ՝ հայտնի լրագրող և բանաստեղծ Ալի ալ-Դումայնին, համալսարանական դասախոսներ Աբդալլահ ալ-Համիդը և Մաթրուք ալ-Ֆալիհը, ենթարկվեցին 9, 7 և 6 տարի ազատազրկման[24]: (2005թ. օգոստոսին իր գահակալությունից շատ չանցած Աբդալլահ թագավորը ներում շնորհեց վերջիններիս[25]):

Իսլամական բարեփոխողական շարժումն ամեն կերպ գսպելու որոշումն ամրագրվեց 2004թ. աշնանը հրապարակված օրենքով, որն արգելում է պետական ծառայողներին ստորագրել որևէ բողոքարկման տակ կամ հրապարակայնորեն քննադատել իշխող ընտանիքին[26]: Իշխանությունների նման քայլերը կապված էին մի կողմից 2004-ից նավթային գների բարձացման, մյուս կողմից՝ (ալ-Կաիդա) և ջիհադական խմբերի դեմ հաջողված պայքարի հետ[27]: Ներկայումս սաուդական վարչակարգը ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում հետևողականորեն պայքարում է ոչ միայն ջիհադականների, այլև նաև՝ կրոնական մոլեռանդ գաղափարների դեմ: 2004-ի կեսերին 1 400 կղերական պաշտոնյաներ (իմամներ, խատիբներ, մոլաներ) հեռացվել են իրենց պարտականություններից և պետք է նորից վերապատրաստվեն: Կրոնական հանդուրժողականությունն արմատավորելու համար իրականացվում են տարբեր միջոցառումներ[28]:

Ընդդիմադիր շարժումները դիմագրավելու հարցում թագավորական ընտանիքի համար շարունակում են լուրջ հենարան մնալ իսլամական պահպանողական շրջանակները՝ հանձինս վահաբական ուլամայի,

որը դեմ է ազատական բարեփոխումներին՝ դրանք դիտարկելով սպառնալիք վահաբականության և սեփական դիրքերի համար. ինչպես նաև միջին դասից[29] սերած պահպանողականների մի շերտի, որ ներգրավված է հիմնականում վարչարարական համակարգում: Ի դեպ, կան ասանձին պահանջներ, որ երկուստեք առաջ են քաշում թե՛ պահպանողականները, թե՛ բարեփոխիչները[30]:

Հենվելով պահպանողական շրջանակների վրա՝ վարչակարգը 2005թ. փետրվարին անցկացրեց երեք փուլից կազմված տեղական ինքնակառավարման խորհուրդների ընտրություններ[31]: Ընտրություններից առաջ ձևավորվեցին դաշինքներ և խմբակցություններ, որոնք հասարակական շարժման շրջանակներում ընտրապայքար ծավալեցին[32]: Ընտրություններին հաղթանակ տարան հիմնականում պահպանողական և վահաբական ուլամայի կողմից հովանավորվող միջին դասի, հիմնականում արևմտյան կրթություն ստացած, ներկայացուցիչներ, որ աջակցում են թագավորական ընտանիքին, դեմ են աստվածապետության շրջանակներում ազատական բարեփոխումներին, միևնույն ժամանակ ձգտում են երկիրը հեռու պահել իսլամիստական շարժումներից և, ի վերջո, մասնակից դառնալ գործադիրի աշխատանքներին:

Տեղական ընտրությունները խոցել էին մի շարք ստումներով: Ընտրապայքարին որևէ քաղաքական ուժ կամ կուսակցություն չէր մասնակցում, կանանց արգելված էր առաջադրվել և քվեարկել[33], խորհուրդների տեղերի կեսը նշանակվեց թագավորի կողմից: Ցածր էր մասնակցության ցուցանիշը (400 000 ընտրող 3 միլիոնից)[34], որ մատնանշում է, թե ընտրությունները ոգևորություն չէին առաջացրել հասարակության լայն շրջանակներում: Բացի այդ, տեղական խորհուրդները որոշում ընդունելու տեսանկյունից շատ սահմանափակ են: Սա է պատճառը, որ բարեփոխիչները համոզված են, որ տեղական ընտրությունները չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ բարեփոխումների գործընթացի մեջ: Սաուդյան հայտնի այլախոհ գործիչ Մուհսին ալ-Առաֆին նշում է, որ իրենք բարեփոխումների ավելի լուրջ ակնկալիքներ ունեն՝ ընտրվի խորհրդարան, թափանցիկ ֆինանսական և դատական համակարգ[35]:

Փաստորեն, Սաուդյան Արաբիայում չկա արևմտյան ժողովրդավարության, քաղաքացիական ինստիտուտների կամ աշխարհիկ հասարակության որևէ փորձ, իսկ ազատական (առավել ևս՝ աշխարհիկ) գաղափարները հասարակության մեջ այդքան էլ զանգվածային բնույթ չեն կրում: Առանձին բարեփոխիչներ նույնիսկ համոզված են, որ խորհրդարանական ընտրությունների դեպքում, հնարավոր է, հաղթանակ տանեն ոչ թե իսլամական լիբերալները, այլ ցեղային առաջնորդները կամ իսլամիստները[36]: Այս պարագայում, իսլամական ազատականների համար դժվար կլինի պայքարել կրոնական արմատականության, ծայրահեղականության, ինչպես նաև վահաբականության դեմ, որ խոր արմատներ

ունի հասարակական գիտակցության մեջ: Սաուդական (ալ-Հայաթ) թերթի խմբագիր Մայասսար Շամմարիի կարծիքով՝ սաուդական հասարակությունը պատրաստ չէ լայնածավալ բարեփոխումների, ուստի փոփոխությունները չեն կարող ներդրվել միանգամից, ինչպես ցանկանում են բարեփոխիչները: Սինչդեռ ալ-Աուաջին մերժում է այն գաղափարը, թե հասարակությունը պատրաստ չէ ժողովրդավարության: Նա համոզված է, որ հասարակությանը կարելի է վարժեցնել ընտրությունների: «Մենք զգում ենք ժողովրդավարության կարիքը, անկախ այն բանից՝ մենք պատրաստ ենք դրան, թե՝ ոչ»[37]: Իսկ Աբդալլահ ալ-Համիդի համոզմամբ՝ կարևոր է սաուդցիներին սովորեցնել մասնակցություն ունենալ քաղաքական գործընթացներին, այլ կերպ ասած՝ նրանց քաղաքացի դարձնել, քանի որ այդ գիտակցությունը նրանց մեջ դեռևս ամրագրված չէ[38]:

Սաուդյան Արաբիայի ժողովրդավարացման հարցում կարևոր գործոն է սաուդական հասարակությունը, որ պահպանողական, ավանդույթային և ցեղայլն է[39]: Ի վերջո, ժողովրդավարության ինչ մոդել է գործելու Սաուդյան Արաբիայում՝ արևմտյան թե՝ իսլամական: Մահմեդական տեսաբաններից շատերի կարծիքով՝ իսլամը և արևմտյան ժողովրդավարությունն անհամատեղելի են: Իսլամական աշխարհի համար ժողովրդավարություն նշանակում է շարիաթական նորմերի լիակատար ներդրում, ինչը կապահովի իսլամական սկզբունքների վրա խարսխված հասարակության ներդաշնակ զարգացումը: Սակայն փաստ է, որ ժողովրդավարական արժեքների օգտին հանդես եկող իսլամական բարեփոխիչներն ըստ էության առաջ են քաշում արևմտյան ժողովրդավարական արժեքներ, ինչպիսիք են՝ ազատ, խորհրդարանական ընտրությունները:

Իսլամական ազատականներին անհանգստացնում է այն փաստը, որ բարեփոխումների հարցում կարող է բացասական նշանակություն ունենալ նաև ԱՄՆ-ի գործոնը[40]: Փաստ է, որ Վաշինգտոնը արևմտյան արժեքների և ժողովրդավարության ներդրման ու միասեռ հասարակությունների ստեղծման՝ գլոբալ քաղաքականության շրջանակներում Ռիադից պահանջում է բարեփոխումներ անցկացնել երկրում, ինչպես նաև պայքարել իսլամական ահաբեկչության դեմ: Հնարավոր է, որ ԱՄՆ-ի նկատմամբ իսլամական հասարակությունների ավանդական անտագոնիզմի, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից սանձազերծված իրաքյան պատերազմի արդյունքում՝ սաուդցիները բարեփոխումները դիտարկեն իբրև ԱՄՆ-ի կողմից ներդրված և չաջակցեն դրանց: Այս իրողությունը կարող է հետաձգել կամ ընդհանրապես անհաջողության մատնել բարեփոխումների գործընթացը: Աբդ ալ-Ազիզ ալ-Կասիմի կարծիքով՝ «Ցանկացած արտաքին ազդեցություններ, և հատկապես Սիացյալ Նահանգներից, ավելի կբարդացնի իրական առաջընթաց ու-

ենենալու հնարավորությունը»[41]: Այս առումով ուշագրավ է Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Յուբեր Վեդրինի հետևյալ կարծիքը. «...այսօր պարզ է, որ եթե Սաուդյան Արաբիայում անցնեն ազատ ընտրություններ, այնտեղ կհաստատվի հակաարևմտյան վարչակարգ»[42]:

Կարելի է ասել, որ իսլամական բարեփոխողական շարժումը տեսանելի հաջողությունների հասավ Սաուդյան Արաբիայի պես պահպանողական երկրում, չնայած խոսքի ազատության, մարդու իրավունքների, կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ շարունակվող սահմանափակումներին: Սաուդական ընտրանին հազիվ թե ընդառաջ գնար սահմանափակ բարեփոխողական նախաձեռնությունների (խոսքի սահմանափակ ազատություն, քաղաքական բանավեճի ծավալում, տեղական ինքնակառավարման ընտրություններ. քաղբանտարկյալների մի մասի ազատ արձակում և այլն), եթե չլինեին ներքին ճնշումները իշխող ընտանիքի վրա: Սաուդական հասարակական-քաղաքական համակարգի արդիականացման տեսանկյունից հիշյալ ձեռքբերումները մի քայլ են՝ այս ոլորտում ավելի լուրջ բարեփոխումների ճանապարհին:

Հարկ է նշել, որ ազատական շարժման հետագա հաջողությունը կախված է բարեփոխումների հարցում թագավորական ընտանիքի դիրքորոշումից: Բարեփոխողները որոշակի ակնկալիքներ ունեն Աբդալլահ թագավորից, որն էապես աջակցել է բարեփոխողական շարժմանը: Արդյո՞ք Աբդալլահ թագավորն այսուհետև նույնպես ընդառաջ կգնա ներքին մարտահրավերներին, դժվար է ասել, սակայն միաստ է, որ այսօր թագավորական ընտանիքում շատերն են խոսում բարեփոխումների օգտին[43]: Չի բացառվում, որ առաջիկայում սկսվեն սահմանադրության, օրենսդիր մարմնի ստեղծման և ընտրական իրավունքի ներդրմանն առնչվող հարցերի քննարկումներ: Իշխող վարչակարգի տեսանկյունից՝ ահաբեկչության և կրոնական մոլեռանդության դեմ պայքարի հաջողությունը, ինչպես նաև սեփական իշխանության պահպանումը (թեկուզ ինչոր չափով ձևափոխված տարբերակով) շատ դեպքերում կախված է հասարակական-քաղաքական կյանքում իսլամական ազատականացման առավել ներգրավումից:

ARAKS PASHAYAN

ABOUT THE PROBLEM OF SOCIO -POLITICAL REFORMS IN SAUDI ARABIA

The social and political reformist movement in Saudi Arabia reached to his epogee in 2003-2004. The process was expressed with petitions and public claims such as suffrage, transparent financial and judicial system, defense of human rights, creation of constitution, etc. In result of internal challenges and pressures on Royal

family, the reformist movement (led by Islamic liberals) achieved some successes like limited liberty of speech and political discourse, municipal elections, release of several political prisoners. etc. These reforms are a new step towards modernization of public and political life in such conservative country as Saudi Arabia. The Royal Family has to realize that cooperation with Islamic liberalism would help to combat Jihadists and preserve own positions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Իջթիհադը* նկատի է առնում կրոնական-իրավական որոշումների ընդունումը ռացիոնալիստական մեթոդով՝ *կիյասի* (դատողություն ըստ անալոգիայի), *իջմա՛յի* (հավաքական կարծիք) կամ *ռայյի* (ազատ, անհատական կարծիք) միջոցով:
2. Այս մասին տես՝ Кепель Ж., Джихад, М., 2004, стр. 213-216.
3. Основные системы власти Королевства Саудовская Аравия (1992г.), глава VI, Государственная власть, статья XXXXIV, в кн.: Александров И. А., Монархии Персидского залива. Этап Модернизации, М., 2000, стр. 464-479.
4. Кепель Ж., Джихад, стр. 214.
5. Stephane Locroix, Between Islamists and Liberals: Saudi Arabia's New "Islamo-Liberal" Reformists, Middle East Journal, vol. 58, No.3, Summer, 2004, p.346.
6. Նույն տեղում:
7. 2003թ. սեպտեմբերի 24-ին 306 սունիի և շիա աշխարհիկ ուղղվածությամբ մի խումբ ներկայացրեց «Հանուն ազգի պաշտպանության» վերտառությամբ խնդրագիր, որտեղ արծարծված էին վերը նշված հարցերը: Այս մասին տես՝ Toby Jones, Violence and the Illusion of Reform in Saudi Arabia, http://www.merip.org/mero/mero111303.html
8. Արդուլլահ բին Արդ ալ-Ազիզը ընդհուպ մինչև 2005թ. օգոստոսը Ֆահդ թագավորի հիվանդության պատճառով 1995-ից դե ֆակտո ղեկավարում էր երկիրը:
9. John R. Bradley, Reform Debate Rages in Saudi Arabia, Tuesday 4th March 2003, http://www.selvesandothers.org/article7051.html
10. Աշ-շարկ ալ-աուսատ, 14. 05.2003, http://asharqalawsat.com
11. Աշ-շարկ ալ-աուսատ, 18. 05.2003, http://asharqalawsat.com
12. Saudi Arabia To Establish A National Dialogue Center, http://www.islamonline.net/English/News/2003-08/04/article08.shtml
13. Saudi Arabia, World Report, 2005, http://hrw.org/english/docs/2005/01/13/saudia9810.htm
14. Առաջին անգամ տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին որոշում ընդունվել է 1977թ., Խալիդ բին Արդ ալ-Ազիզ թագավորի կողմից, որի չկիրարկման պատճառն այն էր, որ նավթային հսկայական եկամուտների շնորհիվ իշխանությանը հաջողվում էր բարեկեցիկ պայմաններ ստեղծել սաուդական ժողովրդի համար՝ ամեն գնով խուսափելով հասարակական-քաղաքական բարեփոխումներից: Г.Г.Косач, Реформы в Саудовской Аравии: муниципальные выборы http://www.iimes.ru/rus/frame_stat.html

15. Իրենց թեկնածությունը կարող էին առաջադրել 25 տարին լրացած Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ կամ արաբական ծագումով եւ տաս տարուց ավել սաուդական քաղաքացիություն ունեցողներ, որոնք պետք է նախկինում դատված լինեին կամ էլ վտարված պետական ծառայությունից: Ընտրելու իրավունք ունեին 21 տարին լրացած ոչ զինվորական քաղաքացիներ, որոնք պետք է քվեարկեին իրենց մշտական բնակավայրում: Նախքան ընտրական օրենքի հրապարակումը խրախուսվել էր հինգ սաուդցի կանանց թեկնածության առաջադրումը, սակայն արդեն 2004թ. հոկտեմբերին ներքին գործերի նախարար Նայիֆը հայտարարեց, որ հսգիվ թե կանանց թույլատրվի իրենց թեկնածությունն առաջադրել, առավել ևս ընտրել:
16. Հասարակության մեջ արատավոր երևույթների հաղթահարման համար անհրաժեշտ համարվեց նաև երիտասարդական կենտրոնների ստեղծումը և երիտասարդների հետ կապված հատուկ ծրագրերի ստեղծումը, ինչը նրանց մեջ պետք է զարգացնի նորամուծության ոգին: Նշվեց, որ անհրաժեշտ է օգնել ցանկացած մարդու, ով ուզում է հաղթահարել իր մեջ բռնությունն ու ինտեգրվել հասարակությանը: Կարևորվեց նաև կամավոր սկզբունքներով ստեղծված կազմակերպությունների և առևտրական միությունների դերը քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման, ինչպես նաև կառավարության վարչական, իրավական և գործադիր ճյուղերի տարանջատման հարցը: Այս մասին տես՝ Saudi Reform, Middle East Document, Middle East Economic Survey, Vol. XLVII, No. 02, January 12, 2004.
17. 2003թ. գարնանից Մաջլիս աշ-շուրան լրագրողներին թույլատրեց մասնակցել իր աշխատանքներին, իսկ հեռուստաընկերությունները թույլտվություն ստացան մասնակիորեն մեկնաբանել Խորհրդի աշխատանքները: Նախադեպը չունի այն փաստը, որ Արտաքին գործերի նախարարությունը սկսել է մամուլի ասուլիսներ հրավիրել:
18. Շատ դեպքերում լրագրողները ենթարկվել են պատժամիջոցների կրոնական ոստիկանական կառույցին՝ Առաքինության պահպանության և անբարոյականության դեմ պայքարի կոմիտեին քննադատելու կամ վնասաբաշական դոգմաները կասկածի տակ առնելու համար: Այս մասին տես՝ Saudi Arabia, 2004-5005 Country Reports on Human Rights Practicc http://www.jewishvirtuallibrary.org/jsource/anti-semitism/hrsaudiarabia03.html
19. Սաուդուհիները չունեն ընտրելու, վարելու իրավունք, նրանք չի թույլատրվում ուսանել ցանկացած առարկա, նրանք չեն կարող ճանապարհորդել առանց ամուսնու, մերձավոր հարազատի կամ տղամարդ հովանավորի թույլտվության, տղամարդու հետ աշխատել նույն սենյակում: Կանանց նկատմամբ խտրականության կա ամուսնալուծության և երեխաների խնամակալության հարցում: Նրանք պարտավոր են հետևել հագուստի մեջ իսլամական ավանդույթին, այլապես կենթարկվեն շարիաթական պատիժների:
20. Ներկայումս 20, 000 ֆիրմաներ գրանցված են սաուդցի կանանց անունով: Ջիդդայի Առևտրի պալատի 50000 անդամներից 2000-ը կին է: Այս մասին տես՝ Samar Fatany, The Status of Women in Saudi Arabia, http://www.arabview.com/articles.asp?article=477

21. Khalid Hasan, Liberal Reform activism ends in Saudi Arabia, Daily Times, 2004, October 23.
22. Էմիր Նայիֆը, որը Ֆահդ թագավորի հարազատ եղբայրն է, դեմ է անգամ «բարենորոգում» եզրի շրջանառությանը, ինչը մատնանշում է, թե համակարգում ինչ-որ սխալ բան կա: Այդ համատեքստում նրա նախընտրած եզրը «զարգացումն» է: Այս մասին տես՝ www.project-syndicate.org
23. Khalid Bhatti, Limid Reforms Will Not Solve Deep Political Crisis, http://www.socialistworld.net/eng/2005/05/16saudi.html
24. 2004թ. օգոստոսի 9-ին սկսված նրանց դատավարության առաջին մասը, ՍԱԹ-ի պատմության մեջ առաջին անգամ, անցկացվեց բաց, սակայն դատավարության շարունակությունն ընթացավ դռնփակ:
25. Աբդալլահ թագավորը ներում շնորհեց նաև երեք այլախոհների փաստաբանին՝ Աբդ առ-Ռահման ալ-Լահիմին, որը բանտարկվել էր այն բանից հետո, երբ դատավարության ժամանակ քննադատել էր թագավորության դատական գործառույթը, ինչպես նաև իսլամիստ Սայիդ բին Զուեյրին, որը հինգ տարի ազատազրկման էր ենթարկվել թագավորությունում ահաբեկչական գործունեություն ծավալելու համար:
26. Պետական ծառայողներ են բարեփոխումների բազմաթիվ կողմնակիցներ, որ աշխատում են պետական կրթական, գիտական և մշակութային հաստատություններում, ինչպես նաև լրագրողներ, որ աշխատում են պետական թերթերի, ամսագրերի խմբագրություններում և լրատվական գործակալություններում:
27. Դոյություն ունեցող տեղեկությունների համաձայն՝ Սաուդյան Արաբիայում գործում է ալ-Կաիդայի հետ կապ ունեցող իսլամական ծայրահեղականների ցանց:
28. Հիշյալ թեմայի վերաբերյալ ինտերնետային կայքերում երիտասարդների հետ քննարկումներ են ևանցկացվում: Բջջային հեռախոսներ ունեցողները հաճախ են ահաբեկչությունը դատապարտող հաղորդագրություններ ստանում: Ալ-Կաիդայի գործունեությունը հրապարակային ձևով դատապարտել են բեն Լադեն ընտանիքի անդամները, որոնք շատ մոտ են կանգնած իշխող ընտրանուն: Այս մասին տես՝ Chicago Tribune, February 12, 2005, www.danicldrezner.com/archives/001887.html
29. Սաուդյան Արաբիայի հասարակության արդիականացման տեսանկյունից խիստ կարևոր է միջին դասը: Մոտ մեկ միլիոն մարդ հաշվվող միջին դասը ձևավորվել է 1960-ականներից, որի ներկայացուցիչները հիմնականում գործարարներ, համալսարան ավարտած մասնագետներ, համալսարանական դասախոսներ, ինչպես նաև չինովնիկներ են:
30. Թե՛ բարենորոգիչները և թե՛ պահպանողականներն առաջ են քաշում անկախ դատական համակարգի, թափանցիկ բյուջեի ստեղծման և կառավարության հաշվետվության հարցը: Տես՝ Mohamad Bazzi, Quietly, Reform Fades Out After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, published by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm

31. Ընտրությունները տեղի ունեցան Ռիադում և նրա շրջակայքում փետրվարի 10-ին, երկրի արևելյան և արևմտյան՝ մարտի 3-ին և հյուսիսային նահանգներում՝ ապրիլի 21-ին:
32. Նախադեպը չունեցող ընտրությունները թագավորությունում ընթացան նաև «ոչ մաքուր» տեխնոլոգիաներով: Ընտրարշավի ընթացքում սաուդական մամուլում հայտնվեցին հաղորդումներ այն մասին, որ որոշ թեկնածուներ «համեստ» գումարներ են բաժանում ուսանողներին՝ նրանց կողմից աջակցություն ստանալու ակնկալիքով:
33. Նախքան ընտրական օրենքի հրապարակումը խրախուսվել էր հինգ սաուդցի կանանց թեկնածության առաջադրումը, սակայն արդեն 2004թ. հոկտեմբերին Ներքին գործերի նախարար Նայիֆը հայտնաբերեց, որ հազիվ թե կանանց թույլատրվի իրենց թեկնածությունն առաջադրել:
34. Cauthy Nugent, Reforming Saudi Arabia, 2005, March, 4, http://www.workersliberty.org/node/view/3811
35. Mohamad Bazzi, After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm
36. Mohamad Bazzi, Quietly, Reform Fades out After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, published by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm
37. Նույն տեղում:
38. Н.С.Глебова. Оценка арабскими и западными аналитиками современной ситуации в Саудовской Аравии, http://www.iimes.ru
39. Այս տեսանկյունից ուշագրավ է Սաուդյան Արաբիայում ցեղային դեմոկրատիայի գործառույթը, որը, հենվելով ավանդույթի վրա, փորձում է ուժեղ կապ ստեղծել կառավարողի և սրա սուբյեկտների միջև՝ առաջնորդվելով իսլամական խորհրդակցության սկզբունքով: ՍԱԹ-ում շաբաթը մեկ կամ մի քանի անգամ ազատ էմիրները (ներառյալ թագաժառանգը) լսարան են տրամադրում սաուդցի քաղաքացիներին՝ ընդառաջ գնալով նրանց բողոքներին ու առաջարկներին:
40. John R. Bradley, Reform Debate Rages in Saudi Arabia, Tuesday 4th March 2003 http://www.selvesandothers.org/article705.html
41. Mohamad Bazzi, Quietly, Reform Fades Out After a Period During Which Change Seemed Possible, 2004, October 26, by the Long Island, NY Newsday /http://www.commondreams.org/cgi-bin/print.cgi?file=/headlines/04/1026-01.htm
42. "Международного сообщество" увы не существует, Свободная мысль-XXI, No. 7, 2005.
43. Այս առումով ուշագրավ է 2005թ. էմիր Թալալի հայտարարությունն այն մասին, որ արաբ առաջնորդները պետք է բարեփոխումներ իրականացնեն նախքան հասարակական ճնշումների ենթարկվելը: Նա նշել է, որ բարեփոխումների կարիք ունի առաջին հերթին Սաուդյան Արաբիան: Էմիր Թալալը, որ Աբդալլահ թագավորի խորք եղբայրն է, նախկինում զբաղեցրել է ֆինանսների նախարարի պաշտոնը: Այս մասին տես՝ Prince Talal Calls For Reforms in Saudi Arabia, http://www.middle-east-online.com/englisg/?d=14392